

Հայաստանի Հանրապետության համայնքներում (բնակավայրերում) բնակելի կառուցապատման էներգաարդյունավետ օբյեկտների բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի կատալոգում ներառված անհատական բնակելի տների կառուցման խոշորացված արժեքը  
(2014 թվականի մարտի 5-ի դրությամբ)

N/N	Բնակելի տան տիպը	Ընդհանուր մակերեսը <sup>1</sup> /քառ.մ/	Ընդհանուր շինարարական մակերեսը <sup>2</sup> /քառ.մ/	Օբյեկտի կառուցման խոշորացված արժեքը (այդ թվում՝ ԱԱՀ 20%) /հազ. դրամ/	
				բացառությամբ այլ շինարարական աշխատանքների <sup>3</sup>	այլ շինարարական աշխատանքների ներառմամբ
1	2	3	4	5	6
1	ԷԱ-3 (1 հարկանի, 3 սենյակ, նկուղով)	107.7	242.1	61,662.87	66,520.26
	հեռանկարային 2-րդ հարկ	44.9	59.3	15,103.71	18,564.32
2	ԷԱ-4 (1 հարկանի, 4 սենյակ, նկուղով)	148.6	304.3	77,505.21	82,837.87
	հեռանկարային 2-րդ հարկ	132.7	143.9	36,651.33	40,758.37
3	ԷԱ-5 (2 հարկանի, 5 սենյակ, նկուղով)	197.0	343.5	87,489.45	93,121.63
4	ԷԱ-6 (2 հարկանի, 6 սենյակ, նկուղով)	198.56	356.8	90,876.96	96,610.77
5	ԷԱ-2X4 (2 համակցված տուն, յուրաքանչյուրը՝ 2 հարկանի, 4 սենյակ, նկուղով)	169.0	486.9	124,012.43	130,741.33

<sup>1</sup> Ընդհանուր մակերես՝ բնակելի և օժանդակ (խոհանոց, միջանցք, լոգասենյակ, սանհանգույց) սենյերի, ներկառուցված պահարանների, լոջիաների, պատշգամբների, ծածկապատշգամբների, դարավանդների (տեռասա) մակերեսների գումար, որոնք հաշվարկվում են հետևյալ ցածրացնող գործակիցներով. լոջիաների համար՝ 0.5, պատշգամբների և դարավանդների համար՝ 0.3, ծածկապատշգամբների և սառը խորդանոցների համար՝ 1.0: հաշվարկում ներառված չեն նկուղային հարկի, ձեղնահարկի և ավտոտնակի մակերեսները:

<sup>2</sup> Ընդհանուր շինարարական մակերեսը՝ բոլոր հարկերի, այդ թվում՝ նկուղային և բնակելի ձեղնահարկի մակերեսների գումարը՝ արտաքին պատերի պարագծով:

<sup>3</sup> Այլ շինարարական աշխատանքներ՝ արտաքին հաղորդակցուղիներին (ջրատար, գազատար, էլ.մատակարարում) միացման շինմոնտաժային, տարածքի բարեկարգման ու կանաչապատման աշխատանքները:

### *Ծանոթություն.*

- Հաշվարկը կատարվել է «ՀՀ տարածքում կառուցվող շենքերի, կառուցվածքների և շինարարական աշխատանքների տեսակների խոշորացված ցուցանիշներ» նորմատիվատեխնիկական փաստաթղթի և գնագոյացման նոր նորմերի և վերահաշվարկված շինմոնտաժային աշխատանքների մոտավոր հնդեքսների», ՀՀ քաղաքաշինության նախարարի 15.02.2008թ. «Քաղաքաշինական փաստաթղթերի (ծրագրային և ճարտարապետաշինարարական) մշակման աշխատանքների արժեքի հաշվարկման կարգը հաստատելու մասին» N19-Ն հրամանի և ՀՀ կառավարության 23.06.2011թ. N879-Ն որոշման համաձայն:

Նշված արժեքի շրջանակներում նախատեսված են նաև բնակելի տան ներքին հարդարման բարելավված որակի աշխատանքներ՝ ՀՀ ներկրվող տեղական և արտասահմանյան արտադրության լավորակ շինանյութերի (լատեքսային ներկեր, մետաղապլաստե դռներ և պատուհաններ, սանտեխնիկական սարքեր, սարքավորումներ, կերամիկական սալիկներ, փայտյա մանրահատակ և/կամ լամինատ և այլն) կիրառմամբ:

- Բնակելի կառուցապատման օբյեկտների կառուցման խոշորացված արժեքը փոփոխական է, կրում է խորհրդատվական (կողմնորոշիչ) բնույթ և պայմանավորված է ընտրված տեղանքի կառուցապատման, տեղակապման պայմանների բարդության աստիճանով, ինչպես նաև ՀՀ դրամի արժևորման կամ արժեզրկման՝ շուկայական փոխարժեքային տատանումների չափով և այլն: